ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Խաղաղութիւն համաշխարհի. — Ոչ երբէք այնպէս ինչպէս հիմա համաշխարհի խաղաղութեան և զայն պահպանելու միջոցաց վրայ խօսուած է։ Ցնտեսադէտք և քաղաքագէտք չարունակ նոյն բանին զբաղած են. անանկ որ եթէ հաւատալու ըլլանք իրենց խօսիցը և յայտարարութեանցը, կարծես հասած է այն երջանիկ օրն՝ յորում սուսերք և հրանօթք ի խուճ և ի մանգաղ պիտի փոխարկին գործելով զբաղօրութիւն ժողովրդոց։

Բայց մինչդեռ զայս կ'ուզեն հաւատարմացնել մեզ, միւս կողմանէ ահաւորագոյն ևս զինուց և զինուորաց պատրաստութիւն կը տեսնան. ահա այս է իւրաքանչիւր Եւրոպական տէրութեանց զօրութիւնն ի ժամ պատերազմի.

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ	ԶԻՆՈՒՈՐՔ	ԵՐԻՎԱՐՔ	ՀՐԱՆՕԹՔ
Ռուսիա	1,420,424	348,101	2,768
Գերմանիա	1,373,884	270,920	2,672
Աւստրիա	1,075,052	172,981	1,616
Գաղղիա	689,459[1]	161,917	1,796
Իտալիա	750,000	82,153	1,240
Անգղիա	550,000	70,000	1,402
Տաճկաստան	473,000	59,945	648
Պելճիա	223,683	13,800	152
Սպանիա	211,320	30,000	384
Զվիցցերա	201,578	»	294
Շուէտ	150,755	12,000	234
Սերվիա	141,341	8,467	270
Հոլանտա	129,575	10,000	108
Ռումինիա	127,738	19,890	96
Յունաստան	125,734	2,163	50
Բորդոգալ	81,870	7,590	116
Դանիմարքա	51,087	9,800	96
Նորվեկիա	38,280	8,700	88

Ուրեմն ամբողջութեան գումարն կ'ըլլայ 7,814,780 զինուոր. 1,288,337 երիվար և 14,030 հրանօթ։

Ցայսմիկ է թէ այսքան զօրաց ու երիվարաց պահպանութեան և հրանօթից չինութեան համար մեծագումար գրամք արծաթոյ պէտք են. որոնք բաղում երկաթուղիք կրնային չինուիլ և ճամբաներ բացուիլ, կամ ժողովրդոց բաղմապիսի պէտքերն հոգացուիլ. այս է ահա համաշխարհի աշխարհօգուտ խաղաղութիւնը։

Աշխարհահանդէս ի Փիլատելֆիա 1876ին. — 1873ին յուլիսի 4ին ընդհանուր համախմբութիւն մը տեղի ունեցաւ ի Փիլատելֆիա, յորում կարգացուեցաւ Միաբան-Նահանգաց տէրութեան մէկ յայտարարութիւնն՝ յորում կը ծանուցանէր, թէ 1876ին աշխարհահանդէս մը պիտի գումարուի ի Փիլատելֆիա որ 1871ին պիտի ըլլար, բայց խափանուեր էր ամերիկեան Հասարակապետութեան հարիւրամեայ հասատատութեան հանդիսից պատճառաւ։

Ընկերութիւնն որուն յանձնուեցաւ գործը, կ'աշխատի մեծաւ եռանդեամբ ու աշխուժութեամբ շէնքին չինութեանը, որ պիտի բացուի 1876ին ապրիլի 19ին, և պիտի տեւէ մինչև հոկտեմբերի 11։ Ամերիկեան Հասարակապետութիւնն վաղուց հրաւէր ղրկեր էր բոլոր տէրութեանց ներկայանալու այդ Աշխարհահանդիսին՝ իրենց յառաջադիմութեան ամէն տեսակ ձեռագործ ու մտաւոր արտաբերութեամբք. խնդրելով որ եթէ հաճելու ըլլան ընդունիլ այդ հրաւէրքը, կանխեն ծանուցանել զայն 1874ին մարտի 4ին։

Շէնքին մէջ տեղի գրաւելու ամէն տեսակ խնդիրք 1873ին մարտի 4ին պիտի ըլլան. որուն բոլորական յատակագծէն օրինակ մը պիտի ղրկուէր արդէն այն ամէն տէրութեանց՝ որ կը բարեհաճէին ընդունել եղած հրաւէրքը։ Իսկ ներկայանալի ամենայն առարկայք՝ պիտի գտնուին ի Փիլատելֆիա 1876 տարւոյն յունուարի 1էն առաջ, որպէս զի դասաւորուին ու կարգաւորուին։

Դասաւորութիւնն այս կերպով պիտի ըլլայ ըստ որոշման Յանձնաժողովոյն.

Ա. Բնական նիւթք օգտակարք մարդոյ կամ գործածելք ի ձեռաբուստս։

Բ. Այս նիւթոց բաղադրութենէ յառաջ եկած արդիւնքներ։

Գ. Այս արդիւնքները ձեռք բերելու համար ի գործ դրուած մեքենաներ։

« Կը դնենք յառաջին կարգի, ըստ Յանձնաժողովոյն, սկզբնական նիւթերը, ապա անոնց գործածութեան արդիւնքները, և վերջապէս մարդոյ մտաց ու երևակայու-

[1] Զէնք հաշուած 900,000 զօրաց գումարն, որ տակաւին ի կարգ մնած չեն. որ եթէ լրանայ՝ Գաղղիա քիչ տարուան մէջ կրնայ վերստանալ իր նախկին զինուորութիւնը, թէ որ միւս տէրութիւնք կրկնապատկելու չըլլան։

digitised by A.R.A.R.@

թեան մեծամեծ արտաբերութիւնները։ Պարզ ու բնական է այս դասակարգութիւնը, և կը համարինք թէ կը մեկնէ բացայայտ, քան ուրիշ ինչ և է դասակարգութիւն, մարդկութեան զարգացումը և արուեստից ու քաղաքակրթութեան բարգաւաճանքը»։

Ամբողջ Աշխարհահանդէսն ինն բաժին պիտի որոշուի, ըստ յետագայ դասաւորութեան.

Ա. Սկզբնական նիւթք, հանածոյք, բոյսք և կենդանիք։

Բ. Սկզբնական նիւթք գործածեալք սնունդեան և արուեստից համար։

Գ. Հիւսուածք, կտորք և հանդերձք։

Դ. Սպասք, անօթք և կարասիք։

Ե. Շարժիչք և սայլք տեղափոխիչք։

Զ. Միջոցք և եղանակք տարածման օգտակար գիտութեանց։

Է. Գործք ճարտարապետակնք և հասարակաց շինութիւնք։

Ը. Արուեստք ծրագրականք։

Թ. Առարկայք որ ունին նպատակ բարեկեցութեան մարդկան՝ բնական, մտաւորական ու բարոյական վիճակը։

Այս պիտի ըլլայ ահաւասիկ Աշխարհահանդիսին դասաւորութիւնը, որ պարզ է, պայծառ ու դիւրըմբռնելի։

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ՏՈՐԵՐՔ ՀՈՒԵՏՈՐԱԿՆՆ ԱՐՈՒԵՍՏԻ. Ի Հ. Սամուէլ Վ. Գանթարեան. — Հաւատարական արուեստին կամ Ճարտասանութեան կարևոր ուսումը աւանդող այլ և այլ ընտիր երկասիրութիւնք երևցած են արդէն ազգիս մէջ և արժանաւոր ընդունելութեամբ մեծարուած։ — Այս նոր հրատարակութեամբս մեր դիտմունքն ու ջանքն եղած է՝ անոնց ամենուն կատարելութեանց հետեւելով, պակասին ալ լեցնել ունէին, լրացընել, և գարոյցս կիրառութեան համար նոր և ընդարձակ գասագիրք մ՚ընծայել։

Այս նպատակին հասնելու վախճանաւ՝ եւրոպական, և մանաւանդ գաղղիացի դասատանաց համար՝ իրենց ուսումնական ժողովոց քննութեամբ վաւերացած այլ և այլ գրուածներ ուսնիմք առջևիս։ ու մեր ազգայնոց աւելի հաճոյական ու օգտակար ընելու համար՝ բաւական չտեսցինք հին և նոր օտար մատենագիրներէ առնուած օրինակաց հարուածիւնը, այլ ազգային հեղինակներէ ալ շատ օրինակներ քաղեցինք ու գրինք։ Հարկ չէ ըսելը թէ անոնց ամենուն սերտողութեամբը աշակերտաց յիշողութիւնը ծանրաբեռնելն աւելորդ է. և թէ ուսուցչին փոյթը պիտի ըլլայ՝ իր բացատրութեամբն անոնց մէջ եղած ոգոյ և զուրցուածքի գեղեցկութիւնն տպաւորել ազգոց թարմ մտքին մէջ։

ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ. Ի Հ. Մանուէլ Վ. Քազրունեան. — Արուեստք և մարգկային Ճարտարութիւնք օր քան զոր որչափ աւելի զարգանան, այնչափ աւելի զգալի կ՚ըլլայ պէտքն՝ ունենալ՝ ի ձեռին առաջնորդ մը՝ որ ուսուցանէ անոնց գլխաւոր տարերքը և կարևոր մասունքը։

Ազգերնուս մէջ թէպէտ հրատարակուած կային զանազան գիրքեր որ կը խօսէին արուեստից վրայ, բայց անոնց առաւել կամ նուազ հնութիւնն կամ համառօտութիւնն և արուեստից մեծաքայլ յառաջդիմութիւնն և նորանոր գիւտերն յորդորեցին զմեզ հրատարակել ուրիշ նոր Արուեստաբանութիւն մը, որ խօսի նորանոր գիւտից և արուեստից վրայ, լեցընելով ազգերնուս նորանոր պէտքերը։

Այս գրուածքս կը խօսի պայծառ ու դիւրըմբռնելի կերպով ամեն գլխաւոր արուեստից վրայ, ուստի չենք տարակուսիր որ լաւ ընդունելութիւն պիտի գտնայ յարուեստագիտաց Ազգիս։

digitised by A.R.A.R.@